

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

ՇԱՀՈՒՅԹ ՉՔԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԶԱԿՑՈՒՄ Է ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ



Ողջույնի նամակ

Հարգելի դիմորդ՝

Շնորհակալություն Հայաստանի Բարեկամներ (ՀԲ) դրամաշնորհների ծրագրի նկատմամբ ցուցաբերած Ձեր հետաքրքրության համար: Մենք, որպես նախկին Խաղաղության Կորպուսի կամավորներ (ԽԿԿ), լավ ենք հասկանում Հայաստանում տեղայնացված համայնքային մակարդակով ծրագրերի նախագծման, ֆինանսավորման և իրականացման խնդիրները: Ուստի Դրամաշնորհների հանձնաժողովը շարունակում է հավատարիմ մնալ հետևյալ սկզբունքներին՝

- Ճկունություն
- Արդյունավետություն
- Նորարարություն
- Ինտեգրում
- Տեղական առաջնորդություն

Դրամաշնորհների հանձնաժողովը ձգտում է ուժեղացնել այն համայնքի ղեկավարներին և կազմակերպություններին և նրանց՝ Խաղաղության Կորպուսի կամավորներ ու Հայաստանի Բարեկամներ հիմնադրամի անդամ գործընկերներին, որոնք դրսևորում են հարցերին, խնդիրներին և հնարավորություններին անդրադառնալու նվիրվածություն՝ նորարարական մտածողության, տեղայնացված զարգացման և հիմնական մոբիլիզացման միջոցով: Մենք նախատեսում ենք ոչ թե առաջ տանել մեր իսկ օրակարգը, այլ մատչելի դարձնել առավել արդյունավետ ու անհրաժեշտ ծրագրերը: Դրամաշնորհի ստանալու համար հարկավոր է կատարել մի քանի պաշտոնական պահանջներ: Մենք ուրախությամբ կաշխատենք դիմորդների հետ՝ երաշխավորելու նրանց ծրագրերի հաջողությունը: Շնորհակալություն Ձեր քրտնաջան աշխատանքի և նվիրվածության համար:

Հարգանքներով՝

Հայաստանի Բարեկամներ Դրամաշնորհների Կոմիտե

Անդրեա Հենդրիկսոն, Ա-15 - Դրամաշնորհների Կոմիտեի Անդամ

Ուոդ Չաբբարդ Ա-14 - Դրամաշնորհների Կոմիտեի Անդամ
Ջեսսի Ջոսեֆ, Ա-13 - Դրամաշնորհների Կոմիտեի Անդամ
Ուրեն Ուիլսոն, Ա-13 - Դրամաշնորհների Կոմիտեի Անդամ
Էլիզաբեթ Պու, Ա-15 - Դրամաշնորհների Կոմիտեի Անդամ

Դրամաշնորհների ուղեցույց , Դրամաշնորհային շրջան, 2011-2012

Ներածություն

Ուրախ ենք հայտարարել ՉԲ-ի երկրորդ ամենամյա դրամաշնորհների ծրագրի մասին: 2012թ սկզբին հույս ունենք հայկական համայնքներին ու իրենց խաղաղության Կորպուսի գործընկեր կամավորներին, ինչպես նաև շահագրգիռ հայկական կազմակերպություններին՝ Հայաստանի Բարեկամներ հիմնադրամի անդամի միջոցով, փոքր դրամաշնորհների ծրագրով հատկացնել առնվազն \$ 5000 ԱՄՆ դոլար: Այս փաստաթղթում դուք կգտնեք ողջույնի նամակը և դիմումի հրահանգները, ինչպես նաև փաստաթղթեր, որոնք Ձեզ կօգնեն կազմակերպել և պատրաստել Ձեր հայցադիմումը:

Ցանկացած և բոլոր հարցերը պետք է ուղղել հետևյալ հասցեով՝

grants@friendsofarmeniaonline.org

Մենք հասկանում ենք, որ ինտերնետային կապը կարող է դժվարություններ առաջացնել, այնպես որ, եթե կարծում եք որ խնդիրներ կույնենաք վերջնաժամկետը բավարարելու հարցում, Դրամաշնորհների հանձնաժողովին տեղեկացրեք ձեր առաջընթացի մասին ինտերնետային կապ ունենալուն պես: Եթե ճիշտ ժամանակին մեզ չիրազեկեք ինտերնետի հետ կապված խնդիրների մասին, մենք չենք կարողանա ընդունել ուշացած հայցադիմումները:

Ի՞նչ է Հայաստանի Բարեկամներ համայնքային դրամաշնորհը:

Հայաստանի Բարեկամներ Համայնքային դրամաշնորհը Հայաստանի Հանրապետությունում աջակցում է համայնքի, երիտասարդների, բիզնեսի, առողջապահական և մարդասիրական զրգացման ծրագրերին, ինչպես նաև մարդասիրական օգնության ծրագրերին: Հայաստանում խաղաղության Կորպուսի Կամավորները և/կամ Հայաստանի Բարեկամներ կազմակերպության անդամները համագործակցում են տեղացի հայ անհատների և խմբերի հետ՝ Համայնքային դրամաշնորհներ պրոյեկտի միջոցով ծրագրեր իրականացնելու համար:

Ո՞վ կարող է դիմել:

Կարող են դիմել Հայաստանում խաղաղության կորպուսի կամավորները, նրանց գործընկեր կազմակերպությունները, և այն հայկական կազմակերպությունները, որոնք գտնվում են Հայաստանի Բարեկամներ կազմակերպության անդամի հովանավորության ներքո: Հայկական կազմակերպությունները կարող են լինել ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական, բայց անպայման պետք է լինեն ակտիվ և իրենց անցյալ գործունեությամբ ցուցադրեն իրենց նվիրվածությունն այնպիսի գաղափարներին, ինչպիսիք են զարգացումը և դրական փոփոխությունները:

Ո՞րոնք են Հայաստանի Բարեկամներ (ՉԲ) համայնքային դրամաշնորհի պահանջները:

ՉԲ Համայնքային Դրամաշնորհը պետք է ներգրավի ԱՄՆ ԽԿ կամավոր, կամ ՉԲ անդամ, ինչպես նաև անպիսի հայ գործընկեր կազմակերպություն, որն իրականացնում է համայնքային, երիտասարդների, բիզնեսի, կամ առողջապահության և/կամ մարդասիրական զարգացման ծրագիր, կամ մարդասիրական օգնության/ծառայության ծրագիր ԳՂ-ում:

Համագործակիցներից պահանջվում է.

- Ողջ ծրագրի ընթացքում պահպանել հաղորդակցում միմյանց և ՀԲ Դրամաշնորհների կոմիտեի հետ
- Դրամաշնորհի ֆոնդին վերաբերվել որպես սրբազան պարտք
- Պահպանել հստակ և ճշգրիտ հաշվետվություն

Բոլոր ծրագրերը պետք է ունենան ԽԿ կամավորների կամ ՀԲ անդամների ակտիվ մասնակցությունը և վերահսկողությունը: Ակտիվ մասնակցությունը ներառում է՝

- Ղեկավարել ծրագրի ֆոնդը
- Այցելել ծրագրի իրականացման վայրը՝ ըստ անհրաժեշտության
- Տեղեկատվությունը կիսել թղթակցության միջոցով
- Համատեղ փոխանակել փորձը
- Գնել, ուղարկել կամ բաժանել/բաշխել զնված ապրանքները
- Հրապարակել ծրագիրը Հայաստանում և Միացյալ Նահանգներում

Ի՞նչ ծրագրեր է նախընտրում ՀԲ Համայնքային Դրամաշնորհը

ՀԲ Համայնքային Դրամաշնորհներ Հիմնադրամը ֆինանսավորում է այն ծրագրերը, որոնք շահավետ են կարիքավոր համայնքին: Բազմաթիվ ծրագրեր պատկանում են այս լայն շրջանակին: Կան որոշ ապրանքներ ու գործունեություններ, որոնք ծրագիրը չի ֆինանսավորում՝ ներառյալ աշխատավարձը, սուրճի ընդմիջումները, կոմունալ ծախսերը, վարորդական ծախսերը, և/կամ կրոնական/քաղաքական գործունեությունները: Եթե վստահ չեք ձեր ծրագրի իրավասությանը, խնդրում ենք կապվել դրամաշնորհների կոմիտեի հետ:

Ո՞րոնք են ֆինանսավորման սահմանները:

Չկա նվաղագույն կամ առավելագույն դրամաշնորհի պահանջագիր: Սակայն, ավելի մեծ գումար պահանջող խնդրագրի համար (այսինքն՝ \$ 1000+) պետք է ներկայացնել ավելի մանրամասն ու լավ ուսումնասիրված առաջարկներ: Մենք ընդունում ենք նաև փոքր գումար պահանջող ծրագրեր՝ օրինակ \$20: Նման միկրո-դրամաշնորհային ծրագիրը կարող է լինել հակիրճ, բայց միևնույն ժամանակ պետք է համապատասխանի մեր պահանջներին:

Ի՞նչն է դիմումը դարձնում ուժեղ:

Լավ ծրագրերը լինում են համոզիչ ու անկեղծ, ցույց են տալիս հստակ, լավ հիմնավորված դիմում և ներկայացվում են ժամանակին: Նախընտրությունը կտրվի այն դիմումներին, որոնք ցույց են տալիս դրամի, ռեսուրսների և ակտիվների նյութական ներդրումներ և ներկայացնում են համայնքի ներդրումն ու սեփականատիրությունը: Նաև խրախուսելի է, որ դիմորդները փնտրեն կողմնակի նյութական նվիրատվություններ այլ դրամաշնորհ տրամադրող կազմակերպություններից, որպեսզի ընդլայնեն և խորացնեն ընդհանուր գործունեությունը և ծրագրի ազդեցությունը, եթե պատշաճ է: Դրամաշնորհների կոմիտեն նախապատվությունը տալիս է այն ծրագրերի առաջարկներին, որոնք ներկայացնում են այնպիսի պլան, որտեղ ՀԲ ֆինանսավորումը հիմք կհանդիսանա ապահովելու լրացուցիչ դրամաշնորհի աջակցությունը: Ուզում ենք ընդգծել, որ չնայած փորձում ենք խուսափել բյուրոկրատիայից, շատ լուրջ ենք վերաբերվում բովանդակությանն ու ժամկետներին:

Ի՞նչպես դիմել և ե՞րբ

Հայտ ներկայացնելու վերջնաժամկետ՝ դեկտեմբերի 2, 2011 թ.: Սա բեկման ենթակա չէ: Խնդրում ենք, որ դիմումները սկսեք ներկայացնել նոյեմբերի 1-ից: Հայտերը պետք է ուղարկել grants@friendsofarmeniaonline.org էլ. հասցեով: Խորհուրդ է տրվում դիմումները ներկայացնել հնարավորինս շուտ՝ խուսափելու ձգձգումներից, որոնք կապված կլինեն նոյեմբերի վերջնաժամկետին մոտ հայտերը ներկայացնելու հետ:

Ո՞րոնք են հաշվետվության պահանջները:

Ծրագրի իրականացման համար հատկացված ժամանակահատվածի կեսին պահանջվում է ներկայացնել միջանկյալ հաշվետվություն: Վերջնական հաշվետվությունը պետք է ներկայացնել ծրագիրն ավարտելու վերջին երկու ամիսների ընթացքում: Ծրագրի գործընկերները պետք է տեղյակ պահեն ՀԲ-ին իրենց նախագծի առաջընթացի մասին:

Հիմնական չափանիշները. Դրամաշնորհային շրջան 2011-2012

Ծրագրերը կգնահատվեն հինգ հիմնական չափանիշներով:

1. Նորարարություն

Արդյո՞ք ծրագիրն օրինավոր կերպով նորարար է: Արդյո՞ք ծրագիրն առաջարկում է նոր մոտեցում, որը շոշափում է վիճելի հարցերը, խնդիրները, կարիքները կամ հնարավորությունները:

2. Համայնքի ներգրավվումը

Արդյո՞ք համայնքը/խումբը ներդրում ունի ծրագրի մեջ: Ինչպե՞ս է արտահայտվում համայնքի աջակցությունը, ներդրումը, սեփականատիրությունը: Ծրագիրը կիրականացվի՞ արդյոք, եթե ԽԿ կամավորը չունենա ակտիվ մասնակցություն: Կա՞ն արդյոք նյութական օգուտներ համայնքի կամ ծրագիրը իրականացնողների համար, որոնք կապահովեն ծրագրի իրականացումը:

3. Հայտի որակը

Արդյո՞ք ծրագրի հայտադիմումը լավ է գրված և խնամքով մշակված: Այն լավ է մտածված: Արդյո՞ք այն պատկերացում է տալիս իսկական խնդրի մասին: Արդյո՞ք ծրագիրը իրագործելի է:

4. Դիմումի որակը

Արդյո՞ք ծրագիրն ունի վերարտադրվելու բարձր պոտենցիալ ներգրավված համայնքներից և խմբերից դուրս: Արդյո՞ք ծրագիրն ունի երկարաժամկետ ու կայուն ազդեցություն: Ծրագիրը ունի՞ ինքնավերարտադրվելու կամ վերարտադրվելու հատկություն: Կարո՞ղ է նրա հաջողությունը կրկնօրինակվել Հայաստանի այլ մասերում: Արդյո՞ք ծրագիրը կայուն է, և եթե այո, ինչպե՞ս:

5. Ինտեգրում և կենսունակություն

Արդյո՞ք ծրագիրն ինտեգրված է առկա ծրագրերի, տեղական նախաձեռնությունների և համայնքի մեջ: Ջարգացման սեկտորը շատ ակտիվ է Հայաստանում, այսպիսով, ինչպե՞ս է ծրագիրն օգտվում այլ ընթացիկ կամ ավարտված ծրագրերից: Ծրագիրն օգտվու՞մ է առկա ռեսուրսներից: Արդյո՞ք ծրագիրը խթանում է նախաձեռնությունները կամ օգտագործում նախապես գոյություն ունեցող համայնքի ռեսուրսներն ու միջոցները:

Դիմումի հրահանգները. Դարամաշնորհային շրջան 2011-2012

Չկա որևէ պաշտոնական կառուցվածքային պահանջ Յայաստանի Բարեկամներ հիմնադրամի դրամաշնորհների դիմումի համար, սակայն ստորև նշված բոլոր կետերը պետք է թվարկել պարզ ու հստակ ֆորմատով: Խնդրում ենք նշել թե ձեր դիմում հայտի մեջ որտեղ է գտնվում յուրաքանչյուր թվարկված կետը: Ցանկալի է, որ օգտագործեք ընդգծող կետեր ու գծեր, այն պայմանով, որ դրանք ցույց տան ծրագրի հստակ և համոզիչ նկարագիրը: Հավելյալ ուշադրություն կտրվի այն ծրագրերին, որոնք դրսևորում են հիմնավոր հասկացում ծրագրի նախագծման, մոնիտորինգի և Յայաստանում ծրագրեր իրականացնելու հատուկ մարտահրավերների մասին: **ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ՀԱՅԵՐԵՆ**, որոնք կուղեկցվեն անգլերեն թարգմանությամբ: Չկա էջի սահմանափակում կամ անհրաժեշտ պայման, բայց հակիրճ դիմում հայտերը մատնանշում են ծրագրի նախագծի ուժեղ պատկերացումը:

1. Տիտղոսաթերթ

- Ծրագրի անվանումը
- Խաղաղության Կորպուսի կամավորի / կամ Յայաստանի Բարեկամներ հիմնադրամի անդամի, գործընկեր կազմակերպության և համայնքի անունները
- Հայցվող գումարն՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով

2. Ամփոփում

- Համայնքի հիմնական նկարագիրը (հարցերը, խնդիրները, կարիքները, ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորությունները, սպառնալիքները)
- Նկարագրել ծրագիրը և թե ինչ խնդիր կամ կարիք է այն շոշափում՝ ներառյալ նախատեսված շահառուները, և թե ինչպես համայնքը/կարիքավոր խումբը կօգտվի ծրագրից
- Հատուկ նպատակները /խնդիրները
- Առաջադրանքների ցուցակը
- Մոնիտորինգի ռազմավարությունը
- Ներկայացնել ծրագիրն ավարտելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը
- Նկարագրել, թե ինչպես շահառու համայնքը կշարունակի այս ծրագիրը դրամաշնորհի ֆոնդը ամբողջությամբ ծախսելուց հետո

3. Ծրագրի դրույթը

- Ծրագրի նպատակը
- Ինչպես է ծնունդ առել/ծագել այս ծրագիրը – որն էր հիմնական հարցը, խնդիրը կամ կարիքը, և թե ինչպես է ծրագիրը անդրադառնում դրան:
- Ինչու եք կարծում, որ այս ծրագիրը խնդրին անդրադառնալու լավագույն ձևն է:

4. Կոնկրետ նպատակների/խնդիրների ցանկը

5. Առաջադրանքների ցանկը՝ նշանակված պատասխանատու կողմի հետ միասին

6. Ծրագրի և ֆինանսական կառավարման կառուցվածքը

- Ներառել թե հիմնական հովանավորի (ԽԿ կամավոր / ՀԲ անդամ) և թե ծրագրի հայ գործընկերոջ կոնտակտային տվյալները/կապի միջոցները:

7. Ժամանակահատվածը

8. Մոնիտորինգի և գնահատման ստրատեգիա

- Ինչպե՞ս արդյոք կիմանաք, թե ծրագիրը հաջողության է հասնում: Ե՞րբ ծրագիրը կհամարվի հաջողակ:

9. Մանրամասն, իրատեսական բյուջեն և բյուջեի նկարագրումը

- Ներառել նյութական ներդրումները (համայնքի)
- Ներառել ցանկացած նվիրատվություն/ ներդրում ցանկացած գործընկեր ֆինանսավորող կազմակերպություններից